

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

2017

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2016 թվականին կատարված
աշխատանքների մասին**

Նախաբան

2016 թվականին ԼՂՀ-ում իրականացվող պետական ֆինանսատնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր մակրոտնտեսական կայունության, տնտեսական աճի բարձր տեմպերի, պետության ֆինանսական միջոցների հավաքագրման, բաշխման և վերաբաշխման գործընթացների արդյունավետության ապահովմանը:

2016 թվականի համախառն ներքին արդյունքը (այսուհետ՝ ՀՆԱ) կազմել է 229.7 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճի տեմպ 9.2 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1,577.3 հազ. դրամ՝ 2015 թվականի 1,414.3 հազ. դրամի դիմաց:

Ցուցանիշը	2012	2013	2014	2015	2016
Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	150,015.7	168,563.6	188,840.3	209,345.7	229,651.6
ՀՆԱ-ի իրական աճ (%)	9.9	9.3	8.9	9.1	9.2
ՀՆԱ 1 շնչի հաշվով (հազ. դրամ)	1,023.0	1,137.9	1,268.1	1,414.3	1,577.3
Արդյունաբերության իրական աճ (%)	99.2	110.0	117.2	102.5	109.7
Գյուղատնտեսության իրական աճ (%)	123.9	109.2	95.7	112.9	107.4
Շինարարության աճ, նվազում (%)	87.4	118.1	111.7	101.0	91.0
Պետական բյուջեի սեփական եկամուտներ (մլն դրամ)	28,755.6	27,919.3	31,485.4	34,436.4	33,711.1
այդ թվում՝ հարկային եկամուտներ (մլն դրամ)	17,097.9	18,936.3	18,291.6	33,175.5	32,432.3
Պետական բյուջեի ծախսեր (մլն դրամ)	67,377.0	67,343.8	69,623.2	82,749.5	84,670.4

Հաշվետու տարվա պետական բյուջեի եկամուտները կազմել են **33,711.1** մլն դրամ, ընդ որում՝ հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են

32,432.3 մլն դրամ՝ ապահովելով պլանային առաջադրանքի կատարումը 102.7 տոկոսով:

2016 թվականի պետական բյուջեն հաջողվել է կատարել առանց ծախսերի գծով ընթացիկ պարտքերի էական կուտակման: Պետական բյուջեով նախատեսված ծրագրերը հիմնականում իրականացվել են նախանշված ծավալներով՝ ապահովելով ակնկալվող արդյունքները: Հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 84,670.4 մլն դրամ:

ԼՂՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման բնագավառներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, ինչպես նաև պետական եկամուտների վճարման նկատմամբ հսկողությունը:

Նախարարությունը հանդիսանում է նաև «Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված հարկային մարմին:

2016 թվականի ընթացքում Նախարարության գործունեությունն ուղղված էր ԼՂՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ԼՂՀ կառավարության գործունեության և այլ աշխատանքային ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների իրագործմանը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքները հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ:

Բյուջետային քաղաքականություն

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված էր բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացի ապահովմանը:

«ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի և «ԼՂՀ 2016

թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության որոշման դրույթների համաձայն աշխատանքներ են իրականացվել պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների կողմից ներկայացված պահպանման ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների, տարիֆիկացիաների, ինչպես նաև առանձին ծառայություններից օգտվելու համար կնքված պայմանագրերի ստուգման ուղղությամբ:

Ընդունվել, ստուգվել և ընդհանրացվել են համայնքների ավագանիների կողմից հաստատված 2016 թվականի համայնքային բյուջեները՝ ըստ եռամսյակային համամասնությունների:

Ուսումնասիրվել, ստուգվել և համաձայնություն է տրվել պետական պատվերի և վճարովի ծառայությունների գծով կիրառվող նորմատիվների և միջինացված գների վերաբերյալ:

Մշակվել է ԼՂՀ 2017-2019թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2017թ. պետական բյուջեի նախագծերի ձևավորման բնագավառում ԼՂՀ պետական իշխանության մարմինների աշխատանքների կատարման ժամանակացույցը սահմանող ԼՂՀ վարչապետի որոշման նախագիծը, որը ընդունվել է 2016թ. մայիսի 30-ին:

ԼՂՀ վարչապետի 2016 թվականի մայիսի 30-ի «ԼՂՀ 2017 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 167-Ս որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմման աշխատանքները: Մշակվել են ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացվող 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդական ցուցումները:

Վերոնշյալ որոշման պահանջների համաձայն կազմվել են նաև 2017 թվականի համայնքների բյուջեների նախագծերի մշակման և ԼՂՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման պարտադիր բնույթի մեթոդական ցուցումները և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցները, պետական տուրքերի և այլ

եկամուսների գծով ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները:

Ուսումնասիրվել և ընդհանրացվել են.

- պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

- համայնքների կողմից ներկայացված ԼՂՀ պետական բյուջեից դոտացիա ստանալու 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը: Հաշվարկվել են համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացվող դոտացիաների գումարները,

- ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված պետական տուրքերի և այլ եկամուսների գծով ԼՂՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների մասին տեղեկությունները:

Մշակվել են «ԼՂՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը», «ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը և նախագծի բացատրագիրը ու ներկայացվել ԼՂՀ կառավարության քննարկմանը: Մասնակցություն է ցուցաբերվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և պատգամավորական խմբակցություններում «ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի քննարկումներին:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն մշակվել է ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի ծախսերի տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական) համամասնությունները (ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի ու դրանք իրականացնող մարմինների) հաստատող «ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագիծը, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 26-ին:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը (ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 6-ին), որի համաձայն՝

- 3.0 մլրդ դրամով նվազեցվել է ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված «Հարկային եկամուտներ և պետական տուրքեր» եկամտատեսակը և 3.7 մլրդ դրամով ավելացվել ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի պակասուրդը.

- 2.0 մլրդ դրամով նվազեցվել են ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի մի շարք ծրագրերի գծով նախատեսված հատկացումները և 2.7 մլրդ դրամով ավելացվել ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված կապիտալ ներդրումների ծրագիրը:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի ու «ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պատրաստվել են ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեում վերաբաշխումներ և փոփոխություններ կատարելու մասին ԼՂՀ կառավարության թվով 13 որոշումների նախագծեր:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդից և այլ կենտրոնացված ֆոնդերից ԼՂՀ կառավարության որոշումներով իրականացվող հատկացումների, օրենսդրությամբ սահմանված կարգով բյուջետային միջոցների վերաբաշխումների հաշվառումը:

Մշակվել են պետական բյուջեի կազմման և կատարման հարցերին առնչվող ԼՂՀ օրենքների, ԼՂՀ Նախագահի հրամանագրի, ԼՂՀ կառավարության և վարչապետի որոշումների նախագծեր, ինչպես նաև նախարարություններից ու գերատեսչություններից ստացված համանման նախագծերի վերաբերյալ տրվել են համապատասխան առաջարկություններ:

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթի բաշխման նպատակով ուսումնասիրվել են պետական լիազորված մարմիններից ստացված առաջարկությունները և տրվել են համապատասխան եզրակացություններ զուտ շահույթի օգտագործման ուղղությամբ: 2015 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքով ստացված զուտ շահույթից պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի դիմաց վճարման

ենթակա շահութաբաժինների չափերի վերաբերյալ պատրաստվել է ԼՂՀ կառավարության որոշման նախագիծ, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2016 թվականի հուլիսի 19-ին: Որոշման համաձայն ԼՂՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների ընդհանուր գումարը կազմել է 110.5 մլն դրամ:

Ապահովվել են արտաբյուջետային մուտքերի համակարգման, հաշվառման և նախատեսված ծրագրերի իրականացմանը նպատակաուղղված ֆինանսավորման գործընթացները:

ԼՂՀ կառավարության մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվին 2016 թվականին նպատակային ծրագրերի իրականացման համար ստացվել է 17,194.3 հազ. ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում քաղաքաշինության, կրթության, առողջապահության և այլ բնագավառներում նպատակային ծրագրերով ֆինանսավորվել է 19,810.6 հազ. ԱՄՆ դոլար:

2016 թվականին ապրիլյան պատերազմի կապակցությամբ հանգանականության կարգով ԼՂՀ կառավարության մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշիվ է մուտքագրվել 5,476.0 մլն դրամ՝ թվով 7,903 ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, որն ուղղվել է ԼՂՀ պաշտպանության նախարարության համար ռազմական նշանակության տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերմանը, ինժեներական աշխատանքների կատարմանը, պաշտպանության բանակի կարիքների համար ենթակառուցվածքների, տրանսպորտի և կապի ծառայությունների ու կապիտալ ծախսերի իրականացմանը, զորակոչված քաղաքացիներին և կամավորականներին դրամական աջակցության տրամադրմանը ու այլ նպատակներին: Կազմվել և հրապարակվել են ամենօրյա հաշվետվություններ՝ ստացված հանգանակությունների վերաբերյալ:

Մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվից կատարվող ֆինանսական հոսքերի մասին պատրաստվել են ամենամսյա հաշվետվություններ:

Մշակվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որի համաձայն հստակեցվել են օրենքի որոշ դրույթներ: Նշված նախագիծը 2017 թվականի պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվել է ԼՂՀ Ազգային ժողովի քննարկմանը և ընդունվել է 2016 թվականի

դեկտեմբերի 22-ին:

2016 թվականին ներդրվել է «LS Budget» էլեկտրոնային ծրագիրը, որը հնարավորություն տվեց ավտոմատացնել պետական բյուջեի ձևավորման և փոփոխությունների հաշվառման աշխատանքները՝ ապահովելով դրանց փոխկապվածությունը բյուջեի կատարման սպասարկման ավտոմատացված գործընթացների հետ:

Գանձապետական համակարգ

2016 թվականին գանձապետական համակարգի ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության աշխատանքներն ուղղված են եղել ինչպես ԼՂՀ պետական բյուջեի համաչափ և սահուն կատարման ապահովմանը, այնպես էլ համակարգի զարգացման և կատարելագործման համար անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

2016 թվականի հուլիսին Նախարարության գանձապետական համակարգը անցել է էլեկտրոնային գանձապետական նոր ONLINE ծրագրին:

Ամբողջ ծավալով վճարվել են աշխատավարձի գծով նախատեսված միջոցները, կենսաթոշակները, նպաստները, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի իրականացման ծախսերը:

Տարվա ընթացքում գանձապետական համակարգը սպասարկել է 440 իրավաբանական անձանց (36 պետական կառավարման մարմին, 227 տեղական ինքնակառավարման մարմին, 164 պետական ոչ առևտրային կազմակերպություն, 11 փակ բաժնետիրական ընկերություն և 2 այլ հիմնարկ) 5361 գանձապետական հաշիվներով, որից 1765-ը՝ պետական բյուջեի, 3478-ը՝ համայնքային բյուջեների, 118-ը՝ արտաբյուջետային գործառնությունների իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում Նախարարության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ ընդունվել են ԼՂՀ նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող բյուջետային ծախսերի ֆինանսավորման հայտերը, ստուգվել, և ճշտության դեպքում իրականացվել է ֆինանսավորումը,

➤ պետական բյուջեի ծախսերի դրամարկղային կատարումն իրականացնելու

նպատակով ապահովվել է առկա դրամարկղային միջոցների բաշխումը կենտրոնական գանձապետարանից տեղական գանձապետական բաժիններին և վերահսկվել կատարումը վերջիններիս կողմից,

➤ պետական և համայնքային բյուջեների կատարման ընթացքում նախնական հսկողություն է իրականացվել բյուջետային հիմնարկների կողմից կատարվող վճարումների ճշտության և նպատակայնության նկատմամբ,

➤ պատրաստվել են ամենօրյա և ամենամսյա տեղեկություններ պետական բյուջեի եկամուտների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման մասին,

➤ կազմվել է ամենամսյա տեղեկատվություն ԼՂՀ պետական բյուջեի կատարողականի մասին (գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ) և սահմանված ժամկետում ներկայացվել է ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն,

➤ հսկողություն է սահմանվել 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության արդյունքում մնացորդային շահույթից շահութաբաժինները պետական բյուջե փոխանցելու նկատմամբ,

➤ նախարարություններից, գերատեսչություններից, բյուջետային այլ հիմնարկներից, տեղական գանձապետական բաժիններից և հասարակական կազմակերպություններից ընդունվել են պետական բյուջեի կատարման 2015 թվականի, 2016 թվականի առաջին եռամսյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ԼՂՀ պետական և համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվությունները, պատրաստվել են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի «ԼՂՀ պետական բյուջեի կատարման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծերը և սահմանված ժամկետներում ներկայացվել ԼՂՀ կառավարություն,

➤ մասնակցություն է ապահովվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումներին,

➤ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո ԼՂՀ պետական բյուջեի կատարման վերլուծության ամփոփ բնութագիրը ներկայացվել է մամուլում հրապարակման համար,

➤ անհրաժեշտության դեպքում նախարարությունների և գերատեսչությունների գրությունների հիման վրա ճշտումներ են իրականացվել նախահաշիվների հոդվածներում: Տարվա ընթացքում մուտքագրվել է 216 գրություն՝ ծախսերի հոդվածային փոփոխություն կատարելու խնդրանքով, որոնցից բավարարվել է 213-ը,

➤ ԼՂՀ պետական կառավարման մարմինների 28 գրության հիման վրա նրանց կողմից օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական բյուջեից իրականացվել են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված վճարումները,

➤ կատարվել է քաղաքացիների ընդունելություն՝ հիմնականում նրանց կողմից պետական և համայնքային բյուջեներ իրավաբանական անձանց կողմից մատուցված ծառայությունների դիմաց սխալմամբ կամ ավել վճարված, ինչպես նաև ծառայությունների կատարումը մերժելու դեպքում վճարված պետական տուրքի գումարի վերադարձման հարցերով: Ընդունվել է 53 դիմում:

Հարկային քաղաքականության

2016 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքի մասով բյուջե է մուտքագրվել 32,432.2 մլն դրամ, որը պլանավորված 31,582.3 մլն դրամ ցուցանիշը գերազանցել է 2.7 %-ով կամ 850.0 մլն դրամով:

Նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը նվազել են 2.8 %-ով կամ 743.1 մլն դրամով:

Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը պլանային առաջադրանքների և նախորդ տարվա համեմատ ներկայացնում են հետևյալ պատկերը.

(մլն դրամ)

Եկամտատեսակը	Պլանային առաջադրանքը	2016թ. մուտքագրված գումարները	Հարաբերությունը մուտք/պլան (%)	Հարաբերությունը 2016/2015 (%)
Ա. Ա. Հ	11 112,5	11 119,6	100,1	99,8
Շահութահարկ	1 829,2	2 054,7	112,3	90,2
Եկամտային հարկ	14 771,7	15 026,2	100,8	101,7

Եկամտատեսակը	Պլանային առաջադրանքը	2016թ. մուտքագրված գումարները	Հարաբերությունը մուտք/պլան (%)	Հարաբերությունը 2016/2015 (%)
Ակցիզային հարկ	147,0	149,0	101,4	82,1
Հաստատագրված վճար	400,1	499,5	124,8	80,9
Առևտրի հարկ	1 400,2	1 454,9	103,9	79,8
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	549,0	684,1	124,6	68,0
<i>այդ թվում՝ ռոյալթի</i>	<i>66,5</i>	<i>157,9</i>	<i>237,4</i>	<i>49,5</i>
Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումներ	380,2	422,1	111,0	98,2
Այլ հարկային եկամուտներ	58,4	59,4	101,7	77,0
Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարներ	199,8	199,9	100,1	74,7
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար	157,0	177,4	113,0	116,8
Արտոնագրային վճար	30,0	37,7	125,7	-
Պետական տուրք	547,3	547,9	100,5	127,1
ԸՆԴԱՄԵՆԸ	31 582,3	32 432,3	102,7	97,8

Հսկողական գործընթացներ

2016 թվականին հարկային մարմնի կողմից իրականացվել է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 243 ստուգում: Նշված ստուգումներով հաշվարկված պարտավորությունները կազմել են 534.8 մլն դրամ: Հաշվետու տարում կատարված ստուգումներով բյուջե մուտքագրված գումարները կազմել են 444.9 մլն դրամ՝ նախորդ տարվա 808.7 մլն դրամի դիմաց, իսկ ընթացիկ և նախորդ տարիներին կատարված բոլոր ստուգումների մասով բյուջե է մուտքագրվել 505.7 մլն դրամ՝ նախորդ տարվա 1,528.4 մլն դրամի դիմաց:

Հարկային իրավախախտումների դեմ համակարգված պայքար իրականացնելու նպատակով ԼՂՀ Նախագահի հանձնարարականով մշակվել է «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգ, որի շրջանակներում իրականացվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության, ապօրինի գործունեության

ծավալման, ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման ճշտության, պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման, չձևակերպված վարձու աշխատողների բացահայտմանն ուղղված հսկողական միջոցառումներ, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման 69, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 29, պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման 10, վարձու աշխատողների չձևակերպման 9, առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների ու դրանց գների գրանցման անհամապատասխանության 7 դեպքեր:

Թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրումների գործունեություն իրականացնող անձանց հայտնաբերելու և հարկման դաշտ բերելու նպատակով ԼՂՀ էկոնոմիկայի նախարարության տրանսպորտային տեսչության հետ համատեղ ձեռնարկվել են լայնածավալ միջոցառումներ, այդ թվում՝ անհատական հանդիպումների տեսքով, որի արդյունքում հարկային մարմնում հաշվառման կամ գործունեության վերսկսման համար դիմել են ուղևորափոխադրումների գործունեություն իրականացնող շուրջ 80 տնտեսավարող սուբյեկտներ:

Կամերալ հսկողության շրջանակներում իրականացվել են հարկ վճարողների 9228 հաշվարկ-հաշվետվությունների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 1211 խախտումների մասով հարկ վճարողներին առաջարկվել է կատարել ճշտումներ:

Հարկ վճարողների իրացման իրական ծավալների վերհանման նպատակով հացի արտադրության ոլորտում գործող 46 հարկ վճարողների մոտ 2016 թվականի տարբեր հաշվետու ժամանակահատվածներում իրականացվել են թվով 91 արտադրանքի արտադրության և իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) չափագրումներ, որոնց արդյունքում 19 հարկ վճարողների մոտ հայտնաբերվել են իրացման ծավալների էական թերհայտարարագրումներ և առաջարկվել է արտացոլել իրական ծավալները:

Աշխատանքներ են տարվել նաև հարկային հանցագործությունների կանխման, հակաիրավական գործունեություն իրականացնող անձանց պատասխանատվության ենթարկման և պետությանը պատճառված վնասների վերականգնման ուղղությամբ:

Նախաքննության ընթացքում գտնվող 2 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 7.0 մլն դրամի չափով վնասը:

2016 թվականի ընթացքում կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին թվով 805 որոշում՝ 11.7 մլն դրամ ընդհանուր գումարով, որից գանձվել է 11.0 մլն դրամը կամ առաջադրվածի 94 %-ը:

Զգալի աշխատանքներ են տարվել նաև հարկ վճարողների կուտակած պարտավորությունների նվազեցման ուղղությամբ՝ պարբերաբար ներկայացվել ծանուցումներ, իրականացվել վճարունակության ուսումնասիրություններ, կիրառվել արգելադրումներ, ներկայացվել դատական հայցեր:

Ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան է ներկայացվել թվով 32 հայց՝ 100.0 մլն դրամ հայցապահանջի գումարով: Ներկայացված հայցերի մասով (այդ թվում՝ նախորդ տարիների մասով) դատական մարմինների կողմից հաշվետու տարում կայացվել է 78 վճիռ՝ 215.7 մլն դրամ ընդհանուր գումարով, ընդ որում՝ 212.6 մլն դրամը կամ 98.5 տոկոսը բավարարվել է, 1.4 մլն դրամը՝ մարվել դատական գործընթացում, 1.7 մլն դրամը՝ մերժվել մասնակիորեն, իսկ 5.9 մլն դրամ գումարով հայցապահանջները դեռևս գտնվում են դատական վարույթում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգրքով սահմանված կարգով նշանակված և չմարված վարչական տուգանքների բռնագանձման համար դատարան է ներկայացվել թվով 36 հայցադիմում՝ շուրջ 0.8 մլն դրամի չափով վճարման կարգադրություն արձակելու մասին, որոնք ամբողջությամբ բավարարվել են դատարանի կողմից:

Օրենսդրական և ենթաօրենսդրական դրույթների կատարելագործում

2016 թվականի ընթացքում հարկային մարմնի կողմից նախաձեռնվել են 11 օրենքների, կառավարության 4 որոշումների նախագծեր, ընդունվել 9 գերատեսչական նորմատիվ ակտեր և 22 անհատական բնույթի հրամաններ:

Օրենսդրական փոփոխությունների առաջին փաթեթը պայմանավորված է 2016 թվականի ապրիլի 1-ից հետո հակառակորդի կողմից սանձագերծված լայնածավալ ռազմական գործողությունների հետևանքով հանրապետությունում ձևավորված իրավիճակով, և միտված է տնտեսության որոշ ոլորտներում առավել մեղմ հարկային քաղաքականության կիրառմանը: Մասնավորապես, «Հաստատագրված վճարների մասին» և «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքներում կատարված

փոփոխություններով նվազեցվել են հաստատագրված և արտոնագրային վճարների չափերը՝ շրջաններում 70 տոկոսի, իսկ Ստեփանակերտ քաղաքում 40 տոկոսի չափով, դրանք համարժեք դարձնելով հարկ վճարողի ստացվող եկամուտների մեծությամբ:

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխությամբ պարտապան զինծառայողի կամ կամավորականի զոհվելու հետևանքով բանկի և վարկային կազմակերպության կողմից 2016 թվականի ընթացքում նրանց ժառանգներին, երաշխավորներին և ընտանիքի անդամներին վարկի գումարների ներման դեպքում այդ գումարները չեն հարկվում եկամտային հարկով:

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխությամբ բանկի կամ վարկային կազմակերպության կողմից պարտապան իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով հաշվեգրված և չվճարված տոկոսները, տույժերը և տուգանքները 2016 թվականի ընթացքում զիջելու կամ ներելու դեպքում՝ այդ գումարների չափով նվազեցվում է բանկի, վարկային կազմակերպության տվյալ տարվա համախառն եկամուտը:

Օրենսդրական փոփոխությունների մյուս փաթեթը, որը կիրառության մեջ է դրվել 2017 թվականի հունվարի 1-ից, միտված է փոքր ձեռնարկատիրության համար հարկման առավել պարզ մեխանիզմների սահմանմանը, օրենքների կիրառության ընթացքում առաջացած խնդիրների վերացմանը, ինչպես նաև հարկ վճարողների կուտակած պարտավորությունների աստիճանական մարման գործընթացի կանոնակարգմանը:

Մասնավորապես, փոքր ձեռնարկատիրության ոլորտում մի շարք ծառայություններ ներառվել են հաստատագրված վճարների և արտոնագրային վճարների հարկման համակարգում, որոշակի սահմանափակումներ են նախատեսվել հիպոթեքային վարկի շրջանակում եկամտային հարկի վերադարձի մասով, անձնավորված տեղեկությունների ներկայացման պահանջ է սահմանվել հարկային գործակալի կողմից անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարվող պասիվ եկամուտների մասով:

«Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքով տույժերի և տուգանքների որոշակի մասից ազատման արտոնություններ են սահմանվել պարտավորություններ կուտակած այն հարկ վճարողների համար, ովքեր պատրաստակամ են մարելու բյուջեի հանդեպ ունեցած

պարտավորությունները, այդպիսով նրանց հնարավորություն ընձեռնելով շարունակելու իրենց բնականոն գործունեությունը: Միաժամանակ, 2009 թվականի հունվարի 1-ից հետո փաստացի գործունեություն չիրականացրած, գույք և եկամուտներ չունեցող հարկ վճարողներն ամբողջությամբ ազատվել են պարտավորությունների կատարումից՝ հաշվի առնելով այդ պարտավորությունների գանձման անհուսալիությունը:

Հանրային իրազեկման աշխատանքներ

2016 թվականին հարկային վարչարարական բարեփոխումների շրջանակներում առանցքային ուղղություն է շարունակել համարվել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնումը: Այդ նպատակով հարկ վճարողների հետ պարբերաբար կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ, անցկացվել ուսուցողական սեմինարներ: Մասնավորապես, 2016 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները հարկ վճարողներին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու նպատակով վերադաս հարկային մարմնի կողմից հանրապետության բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում կազմակերպվել են 7 սեմինար-խորհրդակցություններ:

Հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացում հարկ վճարողներին աջակցելու նպատակով կազմվել են ուսուցման կարիք ունեցող հարկ վճարողների ցանկերը, ըստ որի տարվա ընթացքում թվով 555 հարկ վճարողների հետ կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ:

Պարբերաբար հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական կայքէջի միջոցով. տեղեկատվություն է տրամադրվել հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների, հարկ վճարողների գործունեության կասեցումների, օպերատիվ հետախուզական բացահայտումների և համակարգում կազմակերպվող մրցույթների վերաբերյալ, տրվել իրազեկման, նախազգուշական, քարոզչական բնույթի հայտարարություններ, հրապարակվել ամսական վիճակագրական տեղեկություններ: Հավաքագրվել և հաճախ տրվող հարցերի շտեմարանում ամենամսյա պարբերականությամբ հրապարակվել են հարկ վճարողների կողմից առավել հաճախակի հնչեցրած հարցադրումներն ու դրանց պատասխանները:

2016 թվականին հարկային մարմնի կայքէջի այցելուների քանակը կազմել է 143,584, իսկ միջին ամսական այցելուների քանակը՝ 11,965:

Պարզաբանման աշխատանքներ են իրականացվել նաև անհատական իրազեկման մակարդակով: Մասնավորապես, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից տեղերում կազմակերպվել է 2,595 ընդունելություն, որոնց ընթացքում տրվել են պարզաբանումներ և ցուցումներ հարկ վճարողների կողմից բարձրացված հարցերի շուրջ:

Պարզաբանումներ են տրվել 50 հարկ վճարողների գրավոր հարցադրումներին, այդ թվում՝ 26-ը ստացվել և պատասխան է տրվել հարկային մարմնի կայքէջի առցանց ռեժիմով:

Այս առումով կարևորվում է ղեկտեմքեր ամսից հարկային մարմնում գործարկված «Skype» հեռաձայնային ծառայությունը, որի միջոցով Արցախում ներդրումներ կատարելու պատրաստակամություն ունեցող գործարարները, գործող հարկ վճարողներն ու հարկային ոլորտով հետաքրքրվող այլ անձինք ցանկացած կետից մասնագետին կարող են հղել հարկային օրենսդրությանը վերաբերող իրենց հետաքրքրող հարցերը և օպերատիվ կարգով ստանալ դրանց պատասխանները:

Հաշվետու տարում ԼՂՀ վարչապետի հանձնարարությամբ մշակվել և գործողության մեջ է դրվել «Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման նպատակով այցելությունների» կանոնակարգը, որի նպատակն է հարկ վճարողներին ապահովել բարձրորակ սպասարկմամբ, բացատրական աշխատանքների իրագործման միջոցով բարձրացնել նրանց իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ներկայացնել գործող հարկային և պարտադիր վճարների մասին օրենսդրության և դրանց հետ կապված այլ նորմատիվ ակտերի պահանջները: Գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով նորաստեղծ հարկ վճարողներին այցելության ընթացքում տրամադրվում են նաև հարկման համապատասխան ռեժիմների (առևտրի հարկով, հաստատագրված վճարներով և ընդհանուր հարկման ռեժիմների) վերաբերյալ ուղեցույցներ, որոնցում պարունակվող տեղեկատվության իմացությունը բիզնեսն արդյունավետ կազմակերպելու և հնարավոր սխալներից խուսափելու անհրաժեշտ պայմաններից է:

Իրականացվող բարեփոխումների գործընթացին երիտասարդ մասնագետներին իրազեկ դարձնելու և ներգրավելու նպատակով հանդիպում է կազմակերպվել Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության

Ֆակուլտետի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ, ներկայացվել հարկային օրենսդրության և վարչարարության բարելավմանն ուղղված բարեփոխումներն ու առկա հիմնախնդիրները:

Տարվա ընթացքում թվով 576 գործատուների հետ կնքվել են հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր և տրվել օգտվողի անուն ու գաղտնաբառ՝ վերջիններիս ներկայացնելով էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունները:

Գործունեությունը նոր սկսող 450 հարկ վճարողների տրամադրվել են եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հավաստագրեր:

Համակարգի արդիականացում

Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանն ուղղված կարևորագույն քայլերից մեկը ժամանակակից սպասարկման պայմանների ապահովումն է: Այդ նպատակով շարունակվել են հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավման աշխատանքները, մասնավորապես գործարկման է հանձնվել Քաշաթաղի շրջանի հարկային տեսչության նոր շենքը՝ նորաոճ սպասարկման սրահով, վերազինված ժամանակակից համակարգչային տեխնիկայով ու անհրաժեշտ այլ պարագաներով, կապիտալ վերանորոգվել է Աղավնո հսկիչ կետը, հարկային մարմնի վարչական շենքում ստեղծվել են արխիվային գործերի պահպանման համար համապատասխան պայմաններ:

Մեծ տեղ է հատկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, ինչը հնարավորություն կտա հարկ վճարողներին մատուցել ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայություններ՝ ապահովելով հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը: Էլեկտրոնային կառավարման համակարգի առանձին բաղադրիչների և ծրագրերի նախագծման, մշակման, փորձարկման և ներդրման աշխատանքները համակարգված իրականացնելու նպատակով 2016 թվականի ապրիլին հաստատվել է էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման 2016-2018թթ. հայեցակարգը, սահմանվել առաջնահերթ մշակման ենթակա ծրագրերի ցանկը, ստեղծվել 4 մասնագիտացված աշխատանքային խմբեր, որոնց անմիջական հսկողությամբ և ցուցումներով

մշակվում են համապատասխան ծրագրերը: Մասնավորապես, 2016 թվականի հունվարի 1-ից գործարկվել է բոլոր հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման ենթահամակարգը, որից ներկայումս օգտվում է 1,595 հարկ վճարող: Ընդ որում, 692-ը՝ 36 մլն դրամը գերազանցող իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողներն են, որոնց համար հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով հանձնումը պարտադիր պահանջ է, իսկ 903 հարկ վճարողներ կամավոր հիմունքներով են միացել էլեկտրոնային համակարգին:

2016 թվականի հունիս ամսից ներդրվել է հարկ վճարողների գրանցման և հաշվառման համարների տրամադրման մեկ պատուհանի սկզբունքը, մշակվել պետական ռեգիստրի և հարկային մարմնի միջև տեղեկատվության առցանց փոխանակման ենթածրագիրը:

Մշակվել և թեստավորման ընթացքում է անձնական հաշվի քարտերի վարման ենթահամակարգը:

Հետամուտ լինելով կադրերի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային հմտությունների բարձրացմանը՝ հաշվետու տարվա մայիս և դեկտեմբերի ընթացքում հարկ վճարողների սպասարկման և վերահսկողական գործառույթներ իրականացնող 97 աշխատակիցների հետ անց են կացվել ուսուցողական դասընթացներ՝ հաշվապահական հաշվառման, սպասարկման, վերահսկողության, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և մի շարք այլ թեմաներով: Հարկային մարմնի 2 աշխատակից, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված հրավերների շրջանակում, մասնակցել են IOTA և CEF միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված ուսումնական դասընթացներին, ևս 14 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Հսկիչ կետերում աշխատանքային կարգուկանոնը, հերթապահող անձնակազմի գործառույթները կանոնակարգելու նպատակով նախարարի հրամանով հաստատվել է հսկիչ կետերում հերթապահող անձնակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, ներդրվել հերթապահող անձնակազմի՝ ըստ հսկիչ կետերի ռոտացման համակարգը:

Սերտ համագործակցություն է տարվել Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի հետ. ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև 2015-2017թթ.

համագործակցության միջոցառումների ծրագրի շրջանակում տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են փոխադարձ այցելություններ, կատարվել անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի և այլ տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Ֆինանսական վերահսկողություն

Ֆինանսական վերահսկողության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 118 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 19 բյուջետային հիմնարկներում, 50 պետական ոչ առևտրային և 1 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, 18 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 4 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, 4 հասարակական կազմակերպություններում, 4 քաղաքային և 18 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել են 23,239.9 հազ. դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- բյուջե պակաս հաշվարկված գումարներ՝ 2,874.1 հազ. դրամ,
- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 8,378.9 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 7,512.4 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 827.5 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 39.0 հազ. դրամ,
- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 2,637.6 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 2,607.6 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 30.0 հազ. դրամ,
- նախահաշիվներով ավելի նախատեսված գումարներ՝ 182.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման բյուջե,
- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 7,443.4 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 7,321.2 հազ. դրամ և հաշվառումով վերաձևակերպման՝ 122.2 հազ. դրամ,
- նորմերի խախտումներ՝ 1,186.8 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 774.4 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 30.4 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 382.0 հազ. դրամ,

- գերաձախս՝ 104.9 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 25.0 հազ. դրամ և ձեռնարկության հաշվին՝ 79.9 հազ. դրամ,
- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 54.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման բյուջե,
- ավելցուկ՝ 333.1 հազ. դրամ,
- պակասորդ՝ 44.3 հազ. դրամ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 17,421.1 հազ. դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները՝ 3,930.4 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 967.8 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 543.2 հազ. դրամ:

Ավելցուկը կազմել է 333.1 հազ.դրամ, որից՝ 1 բյուջետային հիմնարկությունում 327.9 հազ.դրամ և 2 պետական ոչ առևտրային կազմակերպություններում 5.2 հազ. դրամ:

Ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդները կազմել են 44.3 հազ. դրամ՝ որից՝ 2 պետական ոչ առևտրային կազմակերպություններում 39.3 հազ. դրամ և 1 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում 5.5 հազ. դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 23,239.9 հազ. դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 9,265.6 հազ. դրամ, որից՝ պետական բյուջե՝ 7,867.3 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 384.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 93.5 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 543.2 հազ.դրամ, ավելցուկ՝ 333.1 հազ. դրամ, պակասորդ՝ 44.3 հազ. դրամ:

Ապառքի գումարները կազմում են 13,974.3 հազ. դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 9,553.8 հազ. դրամ, համայնքային բյուջեին՝ 3,546.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 874.3 հազ. դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում ԼՂՀ ԱՆ «Քաշաթաղի շրջանային բուժմիավորում» ՊՈԱԿ-ն, «Վահե Կարապետյան ճանշահագործում» ՓԲԸ-ն, «Ասկերանի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ն և IV-րդ եռամսյակի վերջում ստուգմամբ հայտնաբերված գումարների ապառքներն են:

Նախորդ՝ 2015թ. կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2016թ. վերականգնվել/վերաձևակերպվել է 4,665.2 հազ. դրամ, որից պետական բյուջե՝ 1,789.3 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 1,624.6 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 234.1 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է՝ 1,017.2 հազ. դրամ:

Ընդամենը 2016թ. պետական բյուջե է վերականգնվել 9,656.6 հազ. դրամ, որից 2016թ. արդյունքներով 7,867.3 հազ. դրամ, 2015թ. ապառքի գումարներից 1789.3 հազ. դրամ: Համայնքային բյուջե է վերականգնվել 2,008.8 հազ. դրամ, որից 2016թ. արդյունքներով 384.2 հազ. դրամ, 2015թ. ապառքի գումարներից 1,624.6 հազ. դրամ: Ձեռնարկության հաշվին է վերականգնվել 327.6 հազ.դրամ, որից՝ 2016թ. արդյունքներով 93.5 հազ. դրամ, 2015թ. ապառքի գումարներից 234.1 հազ.դրամ: Հաշվառումով վերաձևակերպված գումարները կազմել են 1,893.5 հազ. դրամ, որից 2016թ. արդյունքներով 876.3 հազ.դրամ, 2015թ. ապառքի գումարներից 1,017.2 հազ. դրամ:

2016թ. արդյունքներով պակասորդից վերականգնվել է 44.3 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով 10 հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանություն:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորում

Հաշվետու տարում մշակվել և ընդունվել են հաշվապահական հաշվառումը կարգավորող մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝

- ԼՂՀ կառավարության 2016թ. մայիսի 17-ի «Հանրային հատվածի հաշվապահի որակավորում ունեցող հաշվապահների և հանրային հատվածի կազմակերպություններին հաշվապահական ծառայություններ մատուցող անձանց հաշվառման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշումը.

- ԼՂՀ կառավարության 2016թ. մայիսի 17-ի «Գլխավոր հաշվապահ աշխատելու համար հանրային հատվածի հաշվապահի որակավորման պահանջ ունեցող հանրային հատվածի կազմակերպությունների ցանկը սահմանելու մասին» N 236-Ն որոշումը.

- ԼՂՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 29-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական

հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը հաստատելու մասին» N 38-Ն հրամանը.

- ԼՂՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը հաստատելու մասին» N 40-Ն հրամանը,

- ԼՂՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 29-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելը հաստատելու մասին» N 41-Ն հրամանը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վերաբերվող թվով 10 իրավական ակտեր:

2016 թվականին կազմակերպված հաշվապահների որակավորման 3 քննության արդյունքներով որակավորվել է 3 հաշվապահ, իսկ աուդիտորների որակավորման 1 քննության արդյունքներով՝ 2 աուդիտոր:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ որակավորված հաշվապահների թիվը կազմել է 36 հաշվապահ, իսկ որակավորված աուդիտորներինը՝ 10 աուդիտոր:

Ամփոփվել են աուդիտ իրականացնող անձանց կողմից ԼՂՀ ֆինանսների նախարարություն ներկայացված եռամսյակային հաշվետվությունները, որոնց համաձայն 2016թ. ընթացքում աուդիտ իրականացնող անձանց կողմից իրականացվել է 9 պարտադիր և 9 կամավոր աուդիտ: 2016թ. հաշվետու տարվա ընթացքում աուդիտ իրականացնող անձանց կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվել են նաև օրենքով չարգելված այլ ծառայություններ:

Տարվա ընթացքում իրականացվել են հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ: Մասնավորապես՝ սեմինար-խորհրդակցություններ են կազմակերպվել ուսումնական հաստատությունների և Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող առևտրային, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահների և վերապատրաստման դասընթացներ՝ 2017 թվականի հունվարի 1-ից հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցնող կազմակերպությունների հաշվապահների համար: Նշված դասընթացների հիմնական նպատակը հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի առանձնահատկությունների լուսաբանումն ու նոր համակարգին սահուն անցման ապահովումն է:

Ընդունվել են ԼՂՀ պետական կառավարչական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, համայնքային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև ԼՂՀ-ում աուդիտ իրականացնող անձանց կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունները:

Մասնակցություն է ապահովվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «Հաշվապահական հաշվառում. Ներածական դասընթաց» վերապատրաստման 5-օրյա դասընթացներին:

Գնումների գործընթացի կարգավորում

2016 թվականի ընթացքում գնումների գործընթացի կարգավորման ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից.

- ստուգվել, հաշվառվել և ծանուցում է տրվել մոտ 1050 գնման հաշվետվությունների,

- ուսումնասիրվել և հաշվառվել են պետության կարիքների համար 2016 թվականին իրականացվող գնումների պլանում փոփոխություն կատարելու վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված թվով 140 առաջարկություններ, ինչպես նաև կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ թվով 24 գրություններ,

- գնումների ընթացակարգերի կազմակերպման շրջանակներում պետական մարմինների կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և մեթոդական ցուցումներ,

- պատրաստվել են գնումների էլեկտրոնային պաշտոնական տեղեկագրում հրապարակման ենթակա նյութեր՝ բաց ընթացակարգով գնում կատարելու թվով 54 հայտարարություններ և հրավերներ, պարզեցված ընթացակարգով գնում կատարելու թվով 55 հայտարարություններ և հրավերներ, թվով 40 նախաորակավորման հայտարարություններ, շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների վերաբերյալ թվով 49 տեղեկություններ,

- ստուգվել և ամփոփվել են 2015 թվականի տարեկան հաշվետվություններն ու պետական կառավարման մարմինների և ենթակա կազմակերպությունների կողմից ներկայացված 2016 թվականի գնումների պլանները,

- կիրառության մեջ է դրվել Գնումների Միասնական Անվանացանկը (CPV), որի արդյունքում պետական կարիքների համար ձեռքբերվող բոլոր գնման առարկաները ենթարկվել են միասնական կոդավորման և բնութագրման,

- ներդրվել է գնումների պլանի, պլանների փոփոխությունների, կնքված պայմանագրերի հաշվառման ավտոմատացված համակարգ,

- գնումների համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով՝ գնումների էլեկտրոնային տեղեկագրի հիմքի վրա մշակվել և կիրառության մեջ է դրվել պետական պատվիրատուների կողմից գնումների մասին օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների ինքնուրույն հրապարակման էլեկտրոնային մեխանիզմը:

Տարվա ընթացքում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքվել է 33 շրջանակային համաձայնագիր: Ընդհանուր առմամբ կնքված շրջանակային համաձայնագրերի թիվը տարեվերջի դրությամբ կազմել է 205, իսկ մեկ ընթացակարգի հաշվով՝ 12:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման, գնման առարկայի բնութագրերի ստուգման և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջներում խտրականության բացառման պայմանների պահպանման նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ուսումնասիրվել է գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակված 489 հրավեր և հայտարարություն:

Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 2016 թվականի ընթացքում ստացվել է երկու բողոք, որոնց քննությունից հետո դրանք բավարարվել են:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի ընթացքում պետական կառավարման մարմինների կողմից կատարված գնումների ծավալը (բացառությամբ գնումների բազային միավորը չգերազանցող, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված և պետական գաղտնիք պարունակող գնումների) կազմել է 9,541.4 մլն դրամ, որից 3,923.4 մլն դրամը (41.1 տոկոսը) մրցակցային հիմունքներով կատարված գնումներն են: Մրցակցային հիմունքներով կատարված գնումների իրականացումն ապահովել է հատկացված միջոցների տնտեսում 102.4 մլն դրամի կամ հատկացված գումարի 2.5 տոկոսի չափով:

Ֆինանսական շուկայի զարգացում

ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից ամփոփվել են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգի գործունեության 2016 թվականի արդյունքները: Հաշվետու տարում ԼՂՀ տարածքում ԱՊՊԱ ոլորտում գործունեություն են ծավալել Հայաստանի Հանրապետության 6 ապահովագրական ընկերություններ՝ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող 27 գործակալների միջոցով: 2016 թվականին ապահովագրվել է **10,151 ավտոմեքենա**: Այդ ընթացքում **674** ճանապարհատրանսպորտային պատահարի կապակցությամբ իրականացվել է **101.9 մլն դրամի** չափով գույքային և անձնական վնասների հատուցում:

Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 238 վարձու աշխատողի՝ 116.2 մլն դրամի չափով:

ԼՂՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 228-Ն որոշման համաձայն 2016 թվականին ընդունվել է մատուցվող ծառայությունների առավելագույն գների կիրառման վերաբերյալ Նախարարության համաձայնությանը ներկայացրած 2 հայտ: Կատարելով հայտերով ներկայացված հաշվարկ-հիմնավորումների ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ թվով 147 ծառայությունների առավելագույն գների կիրառման վերաբերյալ տրվել է համաձայնություն:

Լիցենզավորում

«Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի և ԼՂՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 128 որոշման համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում է «Աուդիտորական ծառայությունների իրականացում», «Վիճակախաղերի կազմակերպում», «Շահումով խաղերի կազմակերպում», «Խաղատների կազմակերպում» գործունեության տեսակների, ինչպես նաև պարզ ընթացակարգով լիցենզավորում:

Լիցենզավորման աշխատանքների շրջանակներում 2016 թվականի ընթացքում Նախարարության կողմից՝

➤ տրամադրվել է ոգելից խմիչքների արտադրության 7 և դադարեցվել է ոգելից խմիչքների արտադրության 4 լիցենզիա.

➤ միջոցներ են ձեռնարկվել պետական տուրքը ժամանակին գանձելու համար՝ հաշվետու տարվա ընթացքում հավաքագրվել է մոտ 13.1 մլն դրամ պետական տուրք.

➤ ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարությանը, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ տրամադրված, կասեցված, դադարեցված լիցենզիաների վերաբերյալ.

➤ «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված լիցենզավորող մարմիններից եռամսյակային կտրվածքով հավաքագրվել են տեղեկություններ լիցենզիաների տրման, գործողության երկարաձգման, վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխության, գործողության դադարեցման վերաբերյալ, ստացված նյութերն ամփոփվել են և ընդգրկվել տվյալների բազա.

➤ վիճակախաղի կազմակերպման գործունեության բնագավառում հավաքագրվել են խաղարկությունով և ոչ խաղարկությունով վիճակախաղերի վերաբերյալ հաշվետվություններ, որոնց արդյունքներն ստուգվել և ամփոփվել են:

«ԱՐՅԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՅԱՂ» ՓԲԸ կողմից ներկայացված տեղեկություններով թողարկվել է 100 000 տոմս, որից վաճառվել է 52,853 տոմս, իսկ 47,147 տոմս մարվել է «Վիճակախաղերի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ստեղծված Արցախի ազգային վիճակախաղի չիրացված տոմսերի հաշվառման, մարման ու պահպանման հանձնաժողովի կողմից: Ընդհանուր առմամբ, շահել է 372 տոմս, շահումային ֆոնդը կազմել է մոտ 105.7 մլն ՀՀ դրամ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ ուժի մեջ է աուդիտորական ծառայությունների իրականացման 1, վիճակախաղերի կազմակերպման 1 և պարզ ընթացակարգով տրված 28 լիցենզիա:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ԼՂՀ օրենսդրության համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2016 թվականի ընթացքում ստացվել, ուսումնասիրվել և տվյալների շտեմարան է մուտքագրվել թվով 59 հաշվետվություն, որոնք բոլորն էլ վերաբերում էին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներին: Ներկայացված

հաշվետվությունների բաշխումն ըստ հաշվետու անձանց տեսակների ներկայացված է ստորև.

- ԼՂՀ ռեզիստրի պետական տարածքային ստորաբաժանումներ՝ 41,
- Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներ՝ 3,
- Նոտարներ՝ 15

Փաստաթղթաշրջանառություն, իրավաբանական ծառայություն և կադրային ոլորտ

2016 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարությունը ստացել է 8,860 փաստաթուղթ, որից 285-ը՝ քաղաքացիների դիմումներ: Բոլոր ստացված փաստաթղթերը քննարկվել և ընթացքավորվել են, անհրաժեշտության դեպքում տրվել են պատասխաններ:

Հաշվետու ժամանկաշրջանում Նախարարության կողմից ընդհանուր առմամբ մշակվել և ներկայացվել են 172 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում.

ԼՂՀ օրենքներ	- 14
ԼՂՀ Նախագահի հրամանագրեր	- 1
ԼՂՀ կառավարության որոշումներ	- 110
ԼՂՀ վարչապետի որոշումներ	- 27
Նախարարի հրամաններ	- 20

Ուսումնասիրվել են նախարարություններից ու գերատեսչություններից ներկայացված ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, այլ իրավական ակտերի և ծրագրերի նախագծերը, գնահատվել են դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը ԼՂՀ օրենսդրության պահանջներին, տրվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Ուշադրության կենտրոնում մշտապես պահելով բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը՝ Նախարարության աշխատողների կողմից իրականացվել են ընդունելություններ ու հանդիպումներ (տարվա ընթացքում՝ ավելի քան հազար ընդունելություն):

Իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները լսվել և պարզաբանվել են, ձեռնարկվել են միջոցներ դրանց լուծման ուղղությամբ:

Նախարարության կողմից կատարված աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու նպատակով մամուլում պարբերաբար հրապարակվել են հաղորդագրություններ:

Պարբերաբար իրականացվել են Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջի (minfin-nkr.am) ընթացիկ տեղեկատվական թարմացման և համալրման աշխատանքները: Կայքէջը պարունակում է տեղեկատվություն Նախարարության գործունեության հիմնական ոլորտների մասին, հայտարարություններ և վիճակագրական տվյալներ, նորություններ և պաշտոնական հաղորդագրություններ: Կայքէջի միջոցով իրականացվում են նաև գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրի հրապարակման, ինչպես նաև մշակված իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման աշխատանքները:

Կադրային ոլորտում Նախարարության կողմից կատարված աշխատանքներն ուղղված են եղել քաղաքացիական ծառայության մասին և հարկային ծառայության մասին ԼՂՀ օրենսդրության պահանջների ապահովմանը, աշխատակազմի մասնագետների գիտելիքների և փորձի բարձրացմանը:

Քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետու տարում կազմակերպվել է քաղաքացիական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար 9 մրցույթ, անցկացվել է անձնակազմի 15 վերապատրաստում և 10 ատեստավորում:

Վերապատրաստման դասընթացներին ավելի մեծ թվով աշխատակիցների ընդգրկման նպատակով, նոյեմբեր ամսում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մասնագետների կողմից անմիջականորեն Արցախում կազմակերպվել են «Կամերալ ուսումնասիրությունների իրականացում» թեմայով ուսուցման դասընթացներ, իրականացվել փորձի փոխանակում՝ վերլուծական աշխատանքների իրականացման բնագավառում, որոնց մասնակցել են 55 աշխատակիցներ:

Նախարարության աշխատակիցները մասնակցել են ՀՀ ֆինանսների նախարարության «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին:

Կազմակերպվել է 2 բաց և 1 փակ մրցույթներ, որին մասնակցած 23 դիմորդներից 5-ն ընդունվել են աշխատանքի հարկային մարմնում:

Տարվա ընթացքում թվով 16 հարկային ծառայողներին շնորհվել են հատուկ և դասային կոչումներ:

Փորձի փոխանակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ:

ԼՂՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսված ծրագրերի կատարողական ցուցանիշները, ինչպես նաև Նախարարության վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշները բերված են համապատասխանաբար Հավելված 1-ում և Հավելված 2-ում:

ԼՂՀ 2016թ. պետական բյուջեների միջոցների հաշվին նախատեսված՝ ԼՂՀ ֆինանսների նախարարության միջոցով ֆինանսավորվող ծրագրերի կատարողականը

/ հազ. դրամ /

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծրագրերի անվանումները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Դրամարկղային ծախսը տարեկան ճշտված պլանի նկատմամբ %
1	1	2	1	Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը	1,124,630.6	1,318,948.0	1,104,761.0	83.8
1	1	2	2	Ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների ձեռքբերում	35,000.0	35,000.0	33,516.0	95.8
1	1	2	3	Գնումների պաշտոնական տեղեկագրերի հրապարակման գործընթացի ապահովման և ընդհանուր օգտագործման ձևաթղթերի ու խիստ հաշվառման փաստաթղթերի պատրաստման ծախսեր	5,000.0	5,000.0	877,0	17.5
1	1	2	4	Ապահովագրական վճարներ և փոխհատուցումներ	5,000.0	5,000.0	-	-
1	1	2	5	ԼՂՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսեր	20,000.0	20,000.0	6,980.0	34.9
1	1	2	6	Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր	36,000,0	36,000.0	36,000.0	100.0
1	3	3	2	Պետական աջակցություն «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	38,918.6	38,918.6	38,166.8	98.1
1	7	1	1	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	2,750,000.0	1,045,500.0	724,466.2	69.3
1	8	1	1	Դոտացիաների տրամադրում համայնքների բյուջեներին	2,793,800.0	2,793,800.0	2,670,372.0	95.6
3	1	1	3	Արտագերատեսչական պահակության պահպանություն	218,313.6	218 313.6	218,313.6	100.0
3	3	2	3	Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ենթակա ծախսեր	100,000.0	78,650.9	78,650.8	100.0
4	1	1	7	Աջակցություն Արցախի ներդրումային հիմնադրամին	2,500,000.0	2,500,000.0	2,500,000.0	100.0

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծրագրերի անվանումները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Գրամարկ-դային ծախս	Գրամարկ-դային տարեկան ճշտված պլանի նկատմամբ %
8	2	4	2	Մուրացանի հիշատակի օրվա անցկացման միջոցառումներ	1,000.0	1,000.0	1,000.0	100.0
8	3	1	4	«Չայն արդարության» ռադիոկայանի պահպանում	8,692.2	8,692.2	8,669.0	99.7
8	3	2	1	Պետական աջակցություն թերթերին / «Ազատ Արցախ» թերթ	85,604.9	85,604.9	85,604.9	100.0
8	4	2	1	Նյութական աջակցություն ԼՂՀ ԱԺ ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին	45,000.0	45,000.0	45,000.0	100.0
8	4	2	2	Պետական աջակցություն հասարակական կազմակերպություններին և ոչ պետական թերթերին	90,000.0	90,000.0	76,182.1	84.6
8	4	3	1	Կրոնի բնագավառի ծախսեր	60,000.0	60,000.0	60,000.0	100.0
10	4	1	15	Քաղաքացիների ինսպեկտորությունների ինդեքսավորման ծախսեր	50,000.0	-	-	-
11	2	1	8	Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը	-	2,277.8	2,277.8	100.0
				ԸՆԴԱՄԵՆԸ	9,966,959.9	8,387,706.0	7,690,837.3	91.7

**ԼՂՀ ֆինանսների նախարարության վարչատնտեսական գործունեությունը
բնութագրող ցուցանիշները**

N/ N	Անվանումը	Չավման միավորը	2016թ.
1.	Աշխատողների միջին ցուցակային թիվը,	մարդ	290
	<i>որից՝ շրջաններում</i>	<i>մարդ</i>	<i>88</i>
2.	Ավտոտրանսպորտային միջոցների քանակը, տարեվերջի դրությամբ,	հատ	20
	<i>որից՝ շրջաններում</i>	<i>հատ</i>	<i>7</i>
3.	Պահպանման ծախսերը (փաստացի)	հազ. դրամ	995,394.7